Դրաft

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇՍ 31

ք. Երևան «03» «02» 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, մի կողմից, և **«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ա. Թարվերդյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կատարել Պայմանագրի 2.3-րդ կետով և իր կանոնադրությամբ նախատեսված թանգարանային առարկաների ու հավաքածուների պահպանում, համալրում, հաշվառում, հանրահռչակում, այցելուի սպասարկում և այլ գործառույթներ (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող.

1.1.1. թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների՝ հավելված N 1,

1.1.2. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ հավելված N 2,

1.1.3. ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության՝ հավելված N 3:

1.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման դիմաց վճարումը կատարվում է դրամաշնորհի հատկացման ձևով՝ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1075. Մշակութային ժառանգության ծրագրի» «11004. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» միջոցառման համար նախատեսված բյուջետային հատկացումների սահմաններում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. 1. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Սույն պայմանագրի պահանջներին համապատասխան՝ Կատարողից ընդունել պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները և հաշվետվությունները:

2.1.2. Իր և Կատարողի կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում Կատարողին ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը և որակը՝ առանց

միջամտելու վերջինիս կանոնադրական գործունեությանը (բացառությամբ օրենքով և Կատարողի կանոնադրությամբ սահմանված դեպքերի):
2.2.2. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկույթ սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:
2.2.3. Իր իրավասությունների սահմաններում կասեցնել Կատարողի կողմից ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարվող աշխատանքները:
2.2.4. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:
2.2.5. Վերահսկել սույն պայմանագրով Կատարողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:
2.2.6. Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքները և իրականացնել դրանց հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրավական ակտերով նախատեսված ձևով ու կարգով:
2.3.2. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի պարտադիր պահանջները:
2.3.3. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:
2.3.4. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
2.3.5. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել Պատվիրատուի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան:
2.3.6. Պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար:
2.3.7. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող ֆինանսական և բովանդակային հաշվետվությունը (ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ): Կատարողը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար: Բովանդակային հաշվետվության հետ ներկայացնել իրականացված միջոցառումների մասին համապատասխան նյութեր (լուսանկարներ, լոգոտիպ կամ այլ գրաֆիկական պատկեր կամ ազդագրեր), հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով:

2.3.8. Պատվիրատուին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2015 թվականի ապրիլի 1-ի N 176-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով:

2.3.9. Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնել նրա իրավասությանը վերապահված հարցերի լուծման տարբերակները:

2.3.10. Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուի հաստատմանը ներկայացնել Կատարողի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային ուղղության մեջ կատարվող փոփոխությունը նախապես՝ մինչև փաստացի ծախսերի կատարումը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Նախահաշվում փոփոխությունների ներկայացման առաջարկի վերջնաժամկետն է 2020 թվականի դեկտեմբերի 20-ը: Աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2020 թ. դեկտեմբերի 25-ը:

2.3.11. Ապահովել իր կայուն գործունեությունը, ֆոնդարաններում թանգարանային առարկաների անվտանգ պահպանությունը, ազդանշանային և հակահրդեհային համակարգի շահագործումը:

Գիտաֆոնդային աշխատանքներ

2.3.12. Իրականացնել «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆոնդերի հաշվառման և պահպանման բաժնի և նրա ենթակայությամբ գտնվող արգելոց-թանգարանների թանգարանային առարկաների լուսանկարում, ինչպես նաև լուսանկարների, սևանկարների և փաստաթղթերի պատկերահանում (սկանավորում):

2.3.13. Շարունակել հույժ կարևոր հուշարձանների փաստավավերագրական նյութերի ապահովագրական պատճենների կազմումը:

2.3.14. Շարունակել ՊՈԱԿ-ի գլխավոր մատյանների էլեկտրոնային տարբերակների ստեղծման աշխատանքները:

2.3.15. Իրականացնել ՊՈԱԿ-ի հավաքածուների համալրման աշխատանքները:

2.3.16. Իրականացնել թանգարանային առարկաների հաշվառման աշխատանքները:

2.3.17. Իրականացնել թանգարանային առարկաների գրանցման աշխատանքները՝ գլխավոր և բաժինների մատյաններում:

2.3.18. Իրականացնել ՊՈԱԿ-ի ֆոնդերում հաշվառված և պահպանվող թանգարանային առարկաների սպասարկում՝ գիտական ուսումնասիրությունների, ցուցահանդեսների, ինչպես նաև բուկլետների, կատալոգների տպագրության համար:

2.3.19. Իրականացնել ՊՈԱԿ-ի ֆոնդերում հաշվառված և պահպանվող նյութերի վերանայման և ճշգրտման աշխատանքներ:

2.3.20. Իրականացնել թանգարանային առարկաների տվյալների մուտքագրումը «Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան»:

Գիտահետազոտական աշխատանքներ

2.3.21. Հաստատել գիտական խորհրդում 2021 թվականի գիտական ծրագրերը, քննարկել և հաստատել գիտամեթոդական խորհրդում և մինչև 2020 թ. ապրիլի 30-ը ներկայացնել պատվիրատուին՝ ներառելով նախատեսվող գիտաժողովների, միջոցառումների,

ցուցահանդեսների, հրատարակվող ուսումնասիրությունների և գիտակրթական ծրագրերի ցանկը ու հստակ ժամանակացույցը:
2.3.22. Նախապատրաստել հրատարակման ալբոմ՝ «Հայկական առնչություն ունեցող Բեյրութի հուշարձանները» խորագրով:
2.3.23. Նախապատրաստել հրատարակման ՊՈԱԿ-ի ֆոնդերում պահպանվող Ա. Վրույրի սևանկարների հավաքածուի հատկանշական ցուցակ (կատալոգ):
2.3.24. Նախապատրաստել հրատարակության «Սյունիք» խորագրով լուսանկարների ալբոմը՝ Գուրոսի լուսանկարների հիման վրա:
2.3.25. Նախապատրաստել հրատարակության «Բերդ» արգելոց-թանգարանին և «Արփի», «Գոշավանք», «Ագարակ» արգելոցներին նվիրված գրքույկներ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով:
2.3.26. Շարունակել փոխհամագործակցության ծրագրերի իրականացման Բեյրութի Հայկազյան համալսարանի, Մոսկվայի Դ. Լիխաչովի անվան ժառանգության ինսիտուտի, Վարշավայի համալսարանի հնագիտության ինսիտուտի և ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ՝ գործնական աշխատանքների կազմակերպման և մասնագետների վերապատրաստման ուղղությամբ:
2.3.27. Շարունակել Մեծամոր, Զորաց Քարեր, Օձաբերդ հնավայրերի 2020 թ. պլանով նախատեսված պեղման աշխատանքները:
2.3.28. Պատվիրատուին ներկայացնել ՀՀ հնագիտական վայրերի հեռանկարային զարգացման ծրագրերի ու կառավարման պլանների մշակման աշխատանքների փաթեթի օրինակելի կառուցվածքը:
2.3.29. Իրականացնել 2020 թ. պեղման աշխատանքների ընթացքում հայտնաբերված հնագիտական արժեքների (խեցեղեն, քարե գործիքներ, մետաղական առարկաներ, պերճանքի նմուշներ, հնամարդաբանական և հնակենդանաբանական նյութեր և այլն) մասնագիտական վերականգնում և ուսումնասիրություն:
2.3.30. Նոր պեղված հատվածների հանույթների, հատակագծերի, չափագրությունների և ճարտարապետական կտրվածքների իրականացում:
2.3.31. Կազմակերպել դասախոսություններ ՀՀ ՊՆ զորամասերում և քրեակատարողական հիմնարկներում:
2.3.32. Իրականացնել վերապատրաստման դասընթացներ ՊՈԱԿ-ի կառուցվածքային ստորաբաժանումների և մասնաճյուղերի աշխատակիցների համար:
2.3.33. Մինչև 2020թ. սեպտեմբերի 1-ը «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ մշակել և պատվիրատուին ներկայացնել հնագիտական վայրերի հեռանկարային զարգացման ու կառավարման պլանների մշակման աշխատանքների օրինակելի ձև:
2.3.34. ՊՈԱԿ-ում պահվող հնագիտական, ազգագրական և պատմաճարտարապետական նյութերի վկայագրերի կազմում:
2.3.35. «Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան»-ում ՊՈԱԿ-ի հավաքածուի թանգարանային առարկաների տվյալների մուտքագրում:
2.3.36. ՊՈԱԿ-ի արգելոցների և արգելոց-թանգարանների էքսկուրսավարների անհատական էքսկուրսիոն տեքստերի քննարկում, գիտական խմբագրում և գիտագործնական պարապմունքների կազմակերպում:

2.3.37. ԱՀ տարածքում պեղված հնագիտական նյութերի վերականգնման և ամրակայման աշխատանքների իրականացում:
2.3.38. Կազմակերպել և մասնակցել հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների, վերապատրաստման ծրագրերի, հրատարակել գիտական, մեթոդական հոդվածներ:
2.3.39. Հրատարակել ՊՈԱԿ-ի «Պատմամշակութային ժառանգություն» ժողովածուի 4-րդ և 5-րդ պրակները:
2.3.40. Կազմակերպել «Մեծամորյան ընթերցումներ 2» միջազգային գիտաժողով և հրատարակել գիտաժողովի հոդվածների ժողովածուն:
2.3.41. Իրականացնել թանգարանային առարկաների վերականգնում և ամրակայում:

Գիտացուցադրական աշխատանքներ՝ պետական սեփականություն հանդիսացող հուշարձանների և թանգարնային առարկանների հանրահռչակում
2.3.42. «Թանգարանների միջազգային օր», «Թանգարանների գիշեր», «Հուշարձանների և պատմական վայրերի միջազգային օր», «Ֆրանկոֆոնիայի օրեր» «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումների խորագրերին համապատասխան՝ մշակել և իրականացնել ծրագրեր:
2.3.43. Արգելոց-թանգարան մասնաճյուղերում կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառման, ցուցահանդեսի վերաբերյալ նյութերը տեղադրել ծառայության կայքէջում և ծավալել գովազդային գործունեություն, ապահովել դիտորդի համար կայքէջում որոնման մատչելիություն:
2.3.44. Պատվիրատուին ներկայացնել ՀՀ պետական տոներին, հիշատակի օրերի և ժողովրդական տոներին նվիրված միջոցառումների ցանկը:
2.3.45. Կազմել ՀՀ մարզերում կազմակերպվելիք Հայաստանում և արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների լուսանկարների շրջիկ ցուցահանդեսներ:
2.3.46. Ապահովել մշտական և ժամանակավոր ցուցադրությունների այցելուների ընդունումն ու էքսկուրսիոն սպասարկումը:
2.3.47. Կազմել մանրակերտ տեսողության խնդիր ունեցող երեխաների համար:
2.3.48. Հնգալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, պարսկերեն) թռուցիկների միջոցով իրականացնել արգելոց-թանգարանների հանրահռչակում:
2.3.49. Մշակել և պատվիրատուին ներկայացնել ՀՀ հուշարձանների տարածքների համար նախատեսված քառալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն) 20 վահանակների տեքստերը՝ ցանկը նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ:
2.3.50. Կազմակերպել ՊՈԱԿ-Ի արգելոց-թանգարաններից մեկում ամառային «հնագիտական ճամբար»:
2.3.51. Պատվիրատուին ներկայացնել պատմամշակութային ժառանգության պահպանմանը վերաբերող սոցիալական գովազդի տեսահոլովակը:
2.3.52. ՊՈԱԿ-ի տնօրինությամբ գործող արգելոցների հանրահռչակող պաստառների տեղադրում Երևանի մետրոպոլիտենի կայարաններում և «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանում:
2.3.53. Պատվիրատուին ներկայացնել ՊՈԱԿ-ի հուշարձանների պահապանների և արգելոց-թանգարանների աշխատակիցների համազգեստների մոդելների, տարբերանշանների դիզայներական վերամշակված տարբերակները և կազմակերպել դրանց կիրառումը:

2.3.54. Կազմակերպել «Զորաց քարեր» բնակատեղի», «Բջնի ամրոց» պատմամշակութային արգելոցներում ներդնել տոմսային տնտեսություն և ապահովել անհրաժեշտ ենթակառուցվածքներ:
2.3.55. «Գլաձորի համալսարան» պատմամշակութային արգելոց-թանգարանում իրականացնել ցուցադրության համալրում:
2.3.56. «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանում կատարել տաճարային համալիր-սրբարան հուշարձանի թանգարանացում, զբաստաշրջային երթուղիների մշակում և կազմակերպում:
2.3.57. «Արփի» բնապատմական արգելոցում իրականացնել հուշարձանների և բնապատմական միջավայրի բարեկարգում, զբոսաշրջային երթուղիների մշակում և դիտահարթակների կազմակերպում, տեղեկատվական և ուղղորդող ցուցանակների տեղադրում:
2.3.58. «Բջնի ամրոց» պատմամշակութային արգելոցում իրականացնել զբոսաշրջային երթուղու մշակում և կազմակերպում, հուշարձանի (ամբար, պալատական շինություն) թանգարանացում:
2.3.59. «Բերդ» պատմամշակութային արգելոցում իրականացնել թանգարանային ցուցադրության համալրում:
2.3.60. Մշակել «Բագրատունյաց ժառանգություն.Լոռե բերդ 1000» խորագիրը կրող փառատոնի գիտամշակութային ծրագիրը:
2.3.61. «Ագարակ» պատմամշակութային-արգելոցի տարածքում գտնվող ժայռափոր-դամբարանում կազմակերպել ժամանակակից տեխնոլոգիական միջոցների կիրառմամբ՝ պատմամշակութային ժառանգության նորովի ներկայացում:

Գիտակրթական ծրագրեր
2.3.62. Կազմակերպել «Գլաձորի համալսարան» պատմամշակութային արգելոց-թանգարանում «Յոթ ազատ արվեստ» խորագրով գիտակրթական ծրագիր:
2.3.63. Շարունակել կազմակերպել «Ճանաչենք մեր մշակութային ժառանգությունը» խորագրի ներքո կրթական ծրագիր դպրոցականների համար ՀՀ մարզերում:
2.3.64. Կազմակերպել «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանում «Արի վերականգնենք Զվարթնոցը» խորագրով գիտակրթական ծրագիր:

Հուշարձանների պահպանություն
2.3.65. Պետական սեփականություն հանդիսացող և չօգտագործվող հուշարձանների, դրանց պահպանական գոտիների տարածքում իրավախախտումների և չհամաձայնեցված այլ բնույթի աշխատանքների կատարման դեպքում համապատասխան իրավապահ մարմիններին փոխանցելու նպատակով կազմել ակտեր և արձանագրություններ արգելոց-թանգարաններին և պատմամշակութային անշարժ հուշարձաններին, դրանց տարածքնեչին հասցված վնասին համապատասխան հայց հարուցելու նպատակով:
2.3.66. Արագ արձագանքել ՊՈԱԿ-ի մարզային ծառայությունների, արգելոցների, արգելոց թանգարանների և թեժ գծով ստացված ահազանգերին, իրականացնել մասնագիտական ուսումնասիրություն, կազմել համապատասխան արձանագրություն և իրականացնել իրավիճակից բխող այլ գործողություններ:

2.3.67. Իրականացնել պահպանվածության առումով առավել վտանգված անշարժ հուշարձանների նկատմամբ մշտադիտարկում:
2.3.68. Իրականացնել պատմամշակութային հուշարձանների լուսանկարումը և թվայնացումը:
2.3.69. Մշակել «Խաչքարերին նոր կյանք» ծրագրի գիտական մեթոդաբանությունը և իրականացնել թվով 50 տապալված խաչքարերի կանգնեցում և ամրակայում ՀՀ մարզերում:
2.3.70. Շարունակել համագործակցությունը մարզերի ՏԻՄ մարմինների հետ, նրանց իրազեկել ոլորտի իրավական փաստաթղթերի մասին՝ պարբերաբար տրամադրելով դրանց օրինակները:
2.3.71. Իրականացնել Լոռե դամբարանադաշտի երեք դամբարանների մաքրման և ցանկապատման աշխատանքները:
2.3.72. Իրականացնել ՀՀ Շիրակի և Վայոց Ձորի մարզերի բրոնզեդարյան հուշարձանների մոնիթորինգ:

2.4. Կատարողն իրավունք ունի՝
2.4.1. Պատվիրատուից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և Կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները:
2.4.2. Պատվիրատուից պահանջել վերացնել Կատարողի գործողություններից (անգործությունից) անկախ՝ Պատվիրատուի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները:
2.4.3. Վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների ընդհանուր արժեքը սահմանված է մինչև 444834.7 (չորս հարյուր քառասունչորս միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար յոթ հարյուր) հազար դրամ՝ ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները: Այդ գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:
3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը Պատվիրատուն պետք է Կատարողին վճարի սույն պայմանագրի 2-րդ հավելվածով սահմանված ժամկետներում, Կատարողի՝ սույն պայմանագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:
3.3. Կատարողի կողմից աշխատանքների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:
3.4. Համաձայն «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2020 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ստորագրության պահից և գործում է մինչև 2021 թվականի հունվարի 31-ը:

4.2. Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է 2020 թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված և կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը (Հավելված N 3):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ ստանալ սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

6.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանվելու դեպքում վերջինս, եթե Պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տույժ Պայմանագրի տվյալ ժամանակահատվածի համար սահմանված գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կատարողը, եթե Պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարված աշխատանքի 0.5 (հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պատվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է Պատվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
7.4. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:
8.2. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:
8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի երկկողմ գրավոր համաձայնություն կազմելու միջոցով:
8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
8.5. Սույն պայմանագիրը կնքելիս կողմերը հաստատում են, որ դրանով իրենց շահերը և օրինական իրավունքները ոչ մի կերպ չեն խախտվում կամ սահմանափակվում:
8.6. Սույն պայմանագիրը կազմված է 12 թերթից (ներառյալ հավելվածները), կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարության տուն 2 ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն հ/հ 900011032399 ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝ Ա. Հարությունյան Կ.Տ.	«Պատմամշակութային ծրագրերի իրականացման և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 15 ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն հ/հ 900018001248 ՀՎՀՀ 02691401 հեռ. (010) 587-427 տնօրեն՝ Ա. Թադևոսյան Կ.Տ.

Հավելված N 1

«03» «02» 2020 թ.

2020 թվականին **«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն»** ՊՈԱԿ-ի N ՄՇՍ 31 պայմանագրի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները

	Ցուցանիշներ	**Քանակ**
Քանակական	Թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանություն (թանգարանային առարկա)	313050
	Մշտական և ժամանակավոր ցուցադրություններում ցուցադրված թանգարանային առարկաների թիվը	13400
	Թանգարանային այցելուի սպասարկում (մարդ), որից 75%-ը վճարովի	718062
	Թանգարանային առարկաների վերականգնում (միավոր)	30
	Թանգարանային առարկաների ամրակայում (միավոր)	150
	Ժամանակավոր ցուցահանդեսներ	6
	Թանգարանային միջոցառումներ	12
	Հրատարակումներ, հոդվածներ (միավոր)	26
	Թանգարանային առարկաների լուսանկարում, թվայնացում (միավոր)	2500
	Ֆոնդերի ապակյա սևանկարների պատկերահանում (սկանավորում)	200
Քանակական	Գլխավոր մատյանների թվայնացում	10.000
	Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան	11.000
	Թանգարանային առարկաների մուտքագրում	500
	Հույժ կարևոր հուշարձանների փաստավավերագրական նյութերի պատճենահանում (միավոր)	4003
	Հուշարձանների լուսանկարում (լուսանկար)	23480
	ՊՈԱԿ-ի նախագիծ – նախահաշիվ ֆոնդի ստուգում	2
	Գիտակրթական ծրագրեր (մշակվող ծրագրերի քանակ)	170
	Թանգարանային միջոցառումներ և գիտակրթական ծրագրեր (միջոցառումներ)	444834.7
	Տրամադրվող դրամաշնորհի գումարը (հազ. դրամ)	502810.0
	Ընդամենը եկամուտ (հազ. դրամ)՝ որից - հասույթ տոմսերի վաճառքից՝ 492310.0 հազ. դրամ - այլ եկամուտ՝ 105000.0 հազ. դրամ	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	**ԿԱՏԱՐՈՂ՝**
<< կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք. Երևան, Սարգսյան 3 տուն 2 ՀՀ գործառնական վարչություն 900011032399 հշ << 02698732 02698732 Ղեկավարի՝ Հարությունյան Կ.Տ.	«Պատմամշակութային արգելոց-թանգարաններ և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ <<, ք. Երևան, Թումանյան 15 << ՖՆ գործառնական վարչություն հ/հ 900018001[illegible] << [illegible] հեռ. (0[illegible]) 387 427 տնօրեն՝ Ամիրյան Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
«03» «02» 2020 թ. N ՄՇՍ 31 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ծրագիր 1075	Միջոցառում 11004	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների (աճողական)												
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			ԸՆԴԱՄԵՆԸ
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	4637	44737,3	89474,6	**89474,6**	125121,2	160767,7	**196414,3**	232060,9	267707,4	**303354,0**	350514,2	397674,5	**444834,7**	**444834,7**
Ընդամենը		44737,3	89474,6	**89474,6**	125121,2	160767,7	**196414,3**	232060,9	267707,4	**303354,0**	350514,2	397674,5	**444834,7**	**444834,7**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032399 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար
Ն. Հովհաննիսյան

ԿԱՏԱՐՈՂ՝
«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Թպիրվանցի 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900018001843 ՀՎՀՀ 02511401
հեռ. (010) 587...
տնօրեն՝ ...
Կ.Տ.

Հավելված N 3

«03» «02» 2020 թ.

N ՄԾՍ 31 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

					Ոչ ֆինանսական ցուցանիշներ			
Ծրագրի կամ քաղաքականության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարագրությունը)	Չափորոշչի տեսակը	Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանակահատվածի համար	Ցուցանիշի փոփոխությունները ըստ համապատասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար (սյուն 1+սյուն 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակահատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերությունը (սյուն 4-սյ. 3)	Տարբերության պատճառը (սյուն 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյուն 5-ում նշված տարբերության պարզաբանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011032399 ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝ **Ն. Հարությունյան** Կ.Տ.	«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ ՀՀ, ք. Երևան, Թաիրովի 15 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն h/h 900018001843 ՀՎՀՀ 02511401 հեռ. (010) 587-427 տնօրեն՝ **Ս. Թադևոսյան** Կ.Տ.